Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 8-ի N 1269 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու, զինվորական հաշվառման գործընթացին առնչվող մարմինների գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Զինվորական հաշվառումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների օրենքով սահմանված զինապարտության ապահովման նպատակով հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգ է:

3. Զինվորական հաշվառման նպատակը խաղաղ և պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության ապահովումն է:

4. Զինվորական հաշվառման խնդիրներն են՝

1) նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների քանակական ու որակական կազմը որոշելը.

2) խաղաղ ժամանակ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության ենթակա քաղաքացիների զորակոչը, ինչպես նաև վարժահավաքային և զորահավաքային նախապատրաստության միջոցառումներին նրանց մասնակցությունն ապահովելը.

3) ռազմական դրություն հայտարարվելու դեպքում զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային համալրումն ապահովելը.

4) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում՝ պահեստազորում գտնվող քաղաքացիների՝ զորամասերին կցագրումը, ինչպես նաև նրանց ամրագրման ապահովումը:

5. Զինվորական հաշվառումը վարվում է անընդմեջ, անհատապես և ընդգրկում է զինվորական հաշվառման ենթակա բոլոր անձանց: Զինվորական հաշվառման ենթակա են՝

1) տվյալ տարվա ընթացքում 16 տարին լրացող արական սեռի քաղաքացիները.

2) սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած քաղաքացիները.

3) օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած արական սեռի քաղաքացիները:

6. Զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև զինվորական հաշվառման ենթակա մասնագիտություններ ունեցող իգական սեռի քաղաքացիները:

7. Զինվորական հաշվառում իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում գործող զինվորական կոմիսարիատներն են: Զինվորական կոմիսարիատները զինվորական հաշվառման վերցված և ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության կամ քրեակատարողական ծառայության կամ փրկարարական ծառայության համակարգերում ծառայության անցած, ինչպես նաև ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության ուսումնական հաստատություն ընդունված զինապարտների մասին տվյալները համապատասխանաբար փոխանցում են ոստիկանությանը, ազգային անվտանգության ծառայությանը, քրեակատարողական ծառայությանը և փրկարարական ծառայությանը՝ այդ

ծառայությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների համաձայն նշված զինապարտների զինվորական հաշվառումն իրականացնելու համար:

8. Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառված զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառումն իրականացնում է Երևան քաղաքի կամ մարզի համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատը (այսուհետ՝ տարածքային զինվորական կոմիսարիատ), իսկ Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և օտարերկրյա պետությունում հյուպատոսական հաշվառման վերցված զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը: Ընդ որում՝

1) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատն իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող և օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող՝ զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառումը՝ մինչև օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմնում այդ քաղաքացիների հյուպատոսական հաշվառման կանգնելը.

2) ազատազրկման ձևով պատիժ կրող և զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների հաշվառումն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի գտնվելու վայրի զինվորական կոմիսարիատը:

9. Զինվորական հաշվառումն իրականացվում է փաստաթղթային եղանակով և էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով: Փաստաթղթային եղանակով տարածքային զինվորական կոմիսարիատում զինվորական հաշվառումն իրականացվում է հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփագրության, այբբենական հաշվառման գրքերի և անձնական գործերի, իսկ Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատում հաշվառված անձանց ամփոփագրության միջոցով: Զինվորական

կոմիսարիատների կողմից զինվորական հաշվառումը վարելու հրահանգը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:

10. Զինվորական հաշվառման կազմակերպման աշխատանքներն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարը ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 25-ը տալիս է քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքներո սկսելու վերաբերյալ կարգադրություն: Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

11. Զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների որակական և քանակական կազմը ճշտելու նպատակով զինվորական կոմիսարիատները ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը ճշտում են հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող զինվորական հաշվառման ենթակա քաղաքացու վերաբերյալ հետևյալ տվյալները՝

1) հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկասեռավարակաբանության, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին.

2) ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում հաշվառված լինելու մասին.

3) բժշկասոցիալական փորձաքննության մարմիններից՝ հաշմանդամություն ունենալու մասին:

12. Քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը՝

1) նախազորակոչային տարիքի քաղաքացիների համար՝ ռախազորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկն է՝ համաձայն N 1 ձևի, որը լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից և քաղաքացուն զինվորական

հաշվառման վերցնելու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է վերջինիս.

2) զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով սահմանված կարգով տարկետում ստացած քաղաքացիների համար՝ զորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկն է (համաձայն ձև N 2), որը լրացվում է զինվորական կոմիսարիատի կողմից և քաղաքացու տարկետումը ձևակերպելու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է վերջինիս.

3) պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչված, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիների համար՝ զինվորական գրքույկն է (համաձայն ձև N 3), որի լրացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով և քաղաքացու զորակոչի կամ պահեստազորում հաշվառվելու օրը տրվում է վերջինիս:

13. Քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը կարող է հաստատվել նաև զինվորական կոմիսարիատի կողմից ըստ անհրաժեշ-տության տրված տեղեկանքով: Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր զինվորական հաշվառման վերաբերյալ տվյալներին, դրանցում շտկումներ կատարելու համար ներկայացնել առաջարկություններ:

14. Զինապարտները զինվորական հաշվառումից հանվում են օրենքով սահմանված դեպքերում՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձինք՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից դրա մասին տրված տեղեկանքը զինվորական կոմիսարիատ ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում.

2) քաղաքացու՝ պահեստազորում գտնվելու սահմանային տարիքը լրանալու օրվան հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում.

3) մահացած կամ օրենքով սահմանված կարգով մահացած ճանաչված քաղաքացիները՝ քաղաքացիական կացության ակտերում զինապարտ քաղաքացու մահվան գրանցման մասին տեղեկատվությունը զինվորական կոմիսարիատի կողմից ստանալու օրվան հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում:

15. Զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ գործատու կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները վարում են աշխատող կամ սովորող, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները՝ նաև համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ գրանցամատյան (համաձայն ձև N 4), որում գրառվում է զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատը: Գրանցամատյանը վարվում է փաստաթղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև, ըստ վարող մարմնի հայեցողության, միաժամանակ 2 եղանակով: Փաստաթղթային եղանակով գրանցամատյանը վարվում է առանձին գրքով, որը գործավարության համար սահմանված կարգով կարվում և կնքվում է, իսկ էջերը համարակալվում են:

16. Ելնելով համայնքի բնակչության թվից, համայնքի վարչական տարածքի մեծությունից, բնակավայրերի՝ միմյանցից գտնվելու հեռավորությունից՝ համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը կարող է վարվել ամբողջական, կամ ըստ համայնքի առանձին բնակավայրերի (քաղաքի, գյուղի), կամ ըստ թաղամասերի, կամ ըստ փողոցների կամ շենքերի՝ մեկ մատյանով կամ առանձին մատյաններով, այբբենական կարգով

գրառումներ կատարելու միջոցով: Գրանցամատյանում նոր գրառումներ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում գրառումներն իրականացվում են գրանցամատյանի նույն մասում՝ նոր տող ավելացնելու միջոցով:

17. Տեղական ինքնակառավարման մարմինները համայնքում բնակվող, իսկ ուսումնական հաստատությունները՝ սովորող զինապարտ քաղաքացիների մասին տվյալները զինապարտների գրանցամատյանում գրառում են քաղաքացու 15 տարին լրանալու տարում՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը: Աշխատանքի կամ ուսման ընդունված զինապարտ քաղաքացիների մասին տվյալները զինապարտների գրանցամատյանում գրառվում են աշխատանքի կամ ուսման ընդունվելու մասին հրամանը տալու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում:

18. Տեղական ինքնակառավարման մարմինները և ուսումնական հաստատությունները զինապարտների գրանցամատյանի գրառումների հիման վրա մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը կազմում են հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող քաղաքացիների ցուցակներ (համաձայն ձև N 5), որոնք կազմման օրվանից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ուղարկում են իրենց գտնվելու վայրի տարածքային զինվորական կոմիսարիատ, իսկ ուսումնական հաստատությունները՝ քաղաքացու հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Ցուցակում գրառվում է զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն: Ցուցակը հաստատվում է տեղական ինքնակառավարման մարմնի կամ ուսումնական հաստատության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

19. Զինապարտների գրանցամատյանի գրառումների փոփոխությունների վերաբերյալ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ, իսկ բնակության վայրի հաշվառման կամ հաշվառումից հանվելու, աշխատանքից կամ ուսումնական հաստատությունից

ազատվելու մասին տեղեկատվությունը՝ ոչ ուշ, քան դրանց ձևակերպման օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ: Տարածքային զինվորական կոմիսարիատը տարեկան մեկ անգամ՝ տվյալ տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, համեմատում է զինապարտների գրանցամատյանի գրառումների, ինչպես նաև ստացված ցուցակների համապատասխանությունը տարածքային զինվորական կոմիսարիատում զինապարտ-ների մասին առկա տվյալների հետ, իսկ տարածքային զինվորական կոմիսարիատում զինապարտների մասին առկա տվյալների փոփոխությունների դեպքում յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ դրա մասին տեղեկատվություն է տրամադրում զինապարտների գրանցամատյան վարող մարմիններին և կազմակերպություններին:

20. Զինապարտների գրանցամատյանի գրառումների հիման վրա պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ գործատու կազմակերպություններում ու ուսումնական հաստատություններում կազմվում են աշխատող պահեստազորայինների, ինչպես նաև զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած աշխատող անձանց ցուցակներ (համաձայն ձև N 6) և մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը ներկայացվում են քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացնող տարածքային զինվորական կոմիսարիատ: Ցուցակում գրառվում է զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, աշխատանքի վայրը և պաշտոնը: Ցուցակը հաստատվում է համապատասխան մարմնի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

21. Օտարերկրյա պետությունում հյուպատոսական հաշվառման կանգնելու համար Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ դիմած զինապարտի զինվորական հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության

կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 1000-Ն որոշմամբ սահմանված կարգի 24-րդ, 25-րդ և 26-րդ կետերով նախատեսված կարգով և ժամկետներում: Սույն կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետում նշված զինապարտ քաղաքացու դիմելու դեպքում բնակչության պետական ռեգիստրը վարող լիազորված մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում զինապարտ քաղաքացու անհատական հաշվառման քարտը կից գրությամբ ուղարկում է Հայաստանի Հանրապետության զինկոմիսարիատ: Հանրապետական զինկոմիսարիատը դրանք ստանալուց հետո կազմակերպում է նշված քաղաքացիների զինվորական հաշվառումը՝ 3 օրվա ընթացքում, որը կարող է երկարաձգվել զինապարտի զինվորական հաշվառման կարգավիճակը որոշելու անհրաժեշտության դեպքում: Հանրապետական զինկոմիսարիատը քաղաքացուն զինվորական հաշվառման վերցնելուց հետո դրա մասին համապատասխան նշումով դիմումները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է բնակչության պետական ռեգիստրը վարող լիազորված մարմին:

22. Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը սույն կարգի 21-րդ կետով նախատեսված անձանց զինվորական հաշվառումն իրականացնելու օրվանից հետո երեք օրվա ընթացքում զինապարտ քաղաքացու տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, եթե նախկինում բնակվել է Հայաստանի Հանրապետությունում՝ նախկին բնակավայրի հասցեն, զինապարտությանն առնչությունը, օտարերկրյա պետությունում մշտական բնակության վայրի հասցեն, անցել է պարտադիր զինվորական ծառայություն, թե՝ ոչ, օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման հիմք ունենալը, եթե օգտվում է տարկետման իրավունքից՝ տարկետման հիմքը և ժամկետը) ավտոմատացված համակարգի միջոցով ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն: Նախազորակոչային տարիքի,

զորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների հաշվառումը վարվում է ըստ տարեթվերի և այբբենական հերթականության, առանձին մատյանով (համաձայն ձև N 7), որում նշվում են քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, տվյալ պետությունում բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարը, եթե նախկինում բնակվել է Հայաստանի Հանրապետությունում՝ նախկին բնակության վայրի հասցեն, առնչությունը զինվորական ծառայությանը (որ զինվորական կոմիսարիատում է հաշվառված, անցել է պարտադիր զինվորական ծառայություն, թե՝ ոչ), օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից տրված տարկետման ժամկետը:

23. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած, ինչպես նաև տվյալ օտարերկրյա պետությունից մեկ այլ օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնած զինապարտ քաղաքացու մասին տվյալները, Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով 15 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ և այն պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ, որտեղ մշտական բնակության է մեկնում զինապարտ քաղաքացին: Զինապարտ քաղաքացու նոր բնակության վայրի Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը տվյալ քաղաքացու հաշվառման մասին տեղեկատվությունը, դրա ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է Հայաստանի Հանրապետության զինվորական

կոմիսարիատ, ինչպես նաև հայտնում նախկին բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

24. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած և պարտադիր զինվորական ծառայության ենթակա (այդ թվում՝ տարկետման իրավունքը կորցրած կամ տարկետման ժամկետը լրացած) քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատի ծանուցման հիման վրա Հայաստանի Հանրապետության դեսպանության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից ստորագրությամբ կամ էլեկտրոնային կապի միջոցով հանձնվում է ծանուցագիր Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին՝ համապատասխանաբար մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը և նոյեմբերի 1-ը: Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը զինապարտին ծանուցելու մասին տեղեկատվությունը և ծանուցված քաղաքացիների ցուցակները մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը և նոյեմբերի 20-ը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ:

25. Սույն կարգով սահմանված գրանցամատյաններում և անվանացուցակներում գրանցվող տվյալները պետք է լինեն ամբողջական, ճշգրիտ և հավաստի, տվյալները լրացնելիս պետք է պահպանվեն հետևյալ պահանջները՝

1) քաղաքացու ազգանունը, անունը և հայրանունը լրացվում են ամբողջությամբ, գլխատառերով.

2) գրառումները կատարվում են կապույտ թանաքով, հստակ ձեռագրով՝ ապահովելով ընթեռնելիությունը, արգելվում է կատարել ջնջումներ, դրանցում անճշտություն հայտնաբերելու դեպքում ուղղումը կատարվում է առանձին՝

փաստաթղթային, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ փաստացի տվյալների հիման վրա, որը հաստատվում է պատասխանատու պաշտոնատար անձի ստորագրությամբ.

3) էլեկտրոնային տարբերակով գրանցամատյանները և ցուցակները լրացվում են յունիկոդ (Unicode) տառատեսակով, էլեկտրոնային գրանցամատյանը վարվում է համակարգչային այնպիսի ծրագրով, որը հնարավորություն է տալիս գրանցամատյանում գրառումներ կատարել միայն համապատասխան գաղտնաբառեր մուտքագրելու արդյունքում և հասանելի լինի միայն գրանցամատյանը վարող պատասխանատու անձանց համար:

26. Զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով՝

1) ոստիկանության մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում՝

ա. աջակցում են զինվորական կոմիսարիատներին՝ զինապարտների զինվորական հաշվառման գործընթացում,

բ. ըստ բնակության վայրի ռեգիստրի տվյալների յուրաքանչյուր տարում 15 տարին լրացող արական սեռի քաղաքացիների մասին տվյալները՝ ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվն ու տարեթիվը, հաշվառման հասցեն, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու դեպքում՝ այդ մասին տեղեկանքը), ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատ,

գ. իրենց կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից Հայաստանի Հանրապետության կամ տարածքային զինվորական կոմիսարիատների գրավոր հարցման հիման վրա յոթնօրյա ժամկետում տրամադրում են տեղեկություններ՝

- բնակչության պետական ռեգիստրում հաշվառման առկայության դեպքում՝ զինապարտի երկքաղաքացիության, օրենքով սահմանված կարգով քաղաքացիություն շնորհված և դեռևս Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր չստացած

արական սեռի անձանց վերաբերյալ՝ նշելով քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, այլ պետության քաղաքացիությունը, հրամանագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, երդում տալու և այն ստորագրելու օրը, ամիսը, տարին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ՝ նշելով քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հրամանագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվելու վերաբերյալ,

- զինապարտ քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու կամ հետախուզման մեջ գտնվելու կամ դատվածություն ունենալու վերաբերյալ,

դ. զինապարտ քաղաքացու մշտական բնակության վայրի հասցեի փոփոխության դեպքում այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացնող զինկոմիսարիատ,

ե. նախազորակոչային տարիքի զինապարտի անձնագրում օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել մինչև նրանց 18 տարեկանը լրանալու օրը՝ զինվորական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, զորակոչային տարիքի զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամանակով կամ զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից նշված ժամկետով (ներառյալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերում նշված բժշկական վերափորձաքննության ժամկետով), ինչպես նաև անձնագիր, նույնականացման քարտ տալու կամ փոխանակելու (բացառությամբ օտարերկրյա

պետություններում բնակվող պահեստազորում հաշվառված կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումից հանված անձանց), ըստ բնակության վայրի հաշվառելու գործողությունները կատարել՝

- նախազորակոչային տարիքի քաղաքացիների համար՝ նրանց զինվորական փաստաթղթերում զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման կանգնած լինելու վերաբերյալ նշումների առկայության դեպքում,

- զորակոչային տարիքը լրացած քաղաքացիների համար՝ նրանց զինվորական փաստաթղթերում զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման կանգնած լինելու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրված տարկետման վերաբերյալ նշումների առկայության դեպքում,

- օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցած կամ օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիների համար՝ նրանց զինվորական փաստաթղթերում զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պահեստազորում հաշվառված լինելու վերաբերյալ նշումների առկայության դեպքում.

2) բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները յուրաքանչյուր ամսվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ են ուղարկում տեղեկություններ նախորդ ամսվա ընթացքում՝

ա. հաշմանդամության խումբ տրված զինապարտ քաղաքացիների վերաբերյալ՝ նշելով քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, հաշմանդամության խումբը (սահմանված

կենսագործունեության սահմանափակման հիմքով ինքնասպասարկման ապահովման ունակության աստիճանը), տալու օրը, ամիսը, տարեթիվը և ժամկետը,

բ. զինապարտ քաղաքացիներին տրված հաշմանդամության խումբը կամ կենսագործունեության սահմանափակման հիմքով ինքնասպասարկման ապահովման ունակության աստիճանը փոխելու կամ հաշմանդամությունը դադարեցնելու վերաբերյալ՝ նշելով քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, հաշմանդամության խումբը կամ կենսագործունեության սահմանափակման հիմքով ինքնասպասարկման ապահովման ունակության աստիճանը փոխելու կամ հաշմանդամությունը դադարեցնելու օրը, ամիսը և տարեթիվը.

3) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ են ուղարկում տեղեկություններ քաղաքացիական կացության ակտերում՝

ա. արական սեռի քաղաքացիների ծնունդների գրանցման վերաբերյալ,

բ. զինապարտ քաղաքացու ազգանվան կամ անվան կամ հայրանվան կամ ծննդյան տարեթվի փոփոխության գրանցման մասին,

գ. զինապարտ քաղաքացու մահվան գրանցման մասին.

4) քրեական վարույթ իրականացնող մարմինները յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատին տրամադրում են տեղեկություններ զինապարտ քաղաքացիների (բացառությամբ պահեստազորում հաշվառված կամ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու հիմքով զինվորական հաշվառումից հանված անձանց) նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին.

5) քրեակատարողական հիմնարկները յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ են ուղարկում տեղեկություններ զինապարտ քաղաքացիների (բացառությամբ պահեստազորում հաշվառված կամ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու հիմքով զինվորական հաշվառումից հանված անձանց)՝

ա. ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտման վերաբերյալ՝ նշելով քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, դատավճիռ կայացրած դատարանը, դատապարտվելու օրը, ամիս, տարին, քրեական օրենսգրքի հոդվածը և ազատազրկման ժամկետը,

բ. ուղղիչ հիմնարկում պատժի կրումից ազատման վերաբերյալ՝ նշելով քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, ազատման հիմքը, օրը ամիսը և տարեթիվը.

6) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր կողմից վարվող հյուպատոսական հաշվառման կանգնած քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատին է տրամադրում տեղեկություններ՝

ա. Հայաստանի Հանրապետության դեսպանությունում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած քաղաքացիների վերաբերյալ,

բ. պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա անձանց և զորահավաքի ժամանակ զինապարտների ծանուցման վերաբերյալ.

7) ազգային անվտանգության ծառայությունն իր կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատի հարցման հիման վրա տրամադրում է տեղեկություններ՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գալու վերաբերյալ,

բ. Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու վերաբերյալ:

27. Սույն կարգով սահմանված գործընթացը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, գործատու կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում իրականացվում է համապատասխան մարմնի ղեկավարի հրամանով նշանակված պատասխանատու անձանց կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Ձև N 1

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության « Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի պահանջների համաձայն պարտավոր եք 18 տարին լրանալուց հետո հայտարարված զորակոչի ընթացքում ներկայանալ Ձեր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ զորակոչային միջոցառումներին մասնակցելու համար:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ
N _____

_____
(ազգանունը)

_____
(անունը, հայրանունը)

_____
(ծննդյան, օրը, ամիսը, տարեթիվը)

Զինվորական հաշվառման է վերցվել

_____ զինվորական կոմիսարիատում

_____ _____ 20 թ.

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Լուսանկար

Կ.Տ.

ՆՇՈՒՄՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.

Զորակոչի բաժանմունքի պետ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.

Զորակոչի բաժանմունքի պետ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ձև N 2

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____-րդ հոդվածի _____ -ին մասի _____ -ին կետի համաձայն՝ մինչև 20 թ.

_____ զորակոչ կամ մինչև

_____ _____ 20 թ.:
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
Կ.Տ.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____-րդ հոդվածի _____ -ին մասի _____ -ին կետի համաձայն՝ մինչև 20 թ.

_____ զորակոչ կամ մինչև

_____ _____ 20 թ.:
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
Կ.Տ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի պահանջների համաձայն պարտավոր եք տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո հայտարարված զորակոչի ընթացքում ներկայանալ Ձեր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ զորակոչային միջոցառումներին մասնակցելու համար:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ
N _____

_____
(ազգանունը)
_____
(անունը, հայրանունը)
_____
(ծննդյան, օրը, ամիսը, տարեթիվը)

Զինվորական հաշվառման է վերցվել

_____ զինվորական կոմիսարիատում

_____ _____ 20 թ.

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Լուսանկար

Կ.Տ.

I. ՆՇՈՒՄՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.

Զորակոչի բաժանմունքի պետ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.

Զորակոչի բաժանմունքի պետ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
Կ.Տ.

II. ՆՇՈՒՄՆԵՐ ՏՐՎԱԾ ՏԱՐԿԵՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____-րդ հոդվածի _____ -ին մասի _____ -ին կետի համաձայն՝ մինչև 20 թ.

_____ զորակոչ կամ մինչև

_____ _____ 20 թ.:
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
Կ.Տ.

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի _____-րդ հոդվածի _____ -ին մասի _____ -ին կետի համաձայն՝ մինչև 20 թ.

_____ զորակոչ կամ մինչև

_____ _____ 20 թ.:
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

Զև N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐՔՈՒՅԿ

ԱԳ № 000001

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Ազգանունը _____

Անունը _____

Հայրանունը _____

Ծննդյան օրը,
ամիսը, տարեթիվը _____

Ստորագրությունը _____

Տրված է _____
(զինվորական կոմիսարիատ)
զինվորական կոմիսարիատի կողմից:

Լուսանկար

<____> _____ 20 թ.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

_____
(կոչումը, ստորագրությունը)

Կ.Տ.

ԱԳ № 000001

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ծննդավայրը _____

_____
(մարզը, քաղաքը, գյուղը)

2. Ազգությունը _____

3. Կրթությունը _____

_____

_____

_____

4. Մասնագիտությունը _____

_____

_____

_____

5. Ընտանեկան դրությունը _____

_____

2

II. ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

6. _____ բժշկական

հանձնաժողովը ճանաչել է _____

_____

(զինծառայության համար պիտանիության աստիճանը)

Զորակոչվել է _____

(ծառայության տեսակը՝ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային)

ծառայության և մեկնել է ծառայության վայր ____ _____ 20 թ.

_____ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ._____

(կոչումը, ստորագրությունը)

7. ____ _____ 20 թ. ազատվել է զինծառայությունից համաձայն _____ _____ և հաշվառվել է պահեստազորում:

_____ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ._____

(կոչումը, ստորագրությունը)

3

ԱԳ № 000001

8. ____ _____ 20 թ. _____

_____ հիման վրա արձակվել է պահեստազոր և ուղարկվել է _____ զինվորական կոմիսարիատ:

Զինվորական հաշվառման նպատակով պարտավոր է մինչև ___ _____ 20 թ. ներկայանալ նշանակման վայր:

_____ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Կ.Տ._____

(կոչումը, ստորագրությունը)

9. Պարտադիր զինվորական ծառայությունը
(գրանցումները վավերացվում են ստորագրությամբ և զորամասի կնիքով)

Զ/մ-ի համարը, զ/ծ-ի պաշտոնը, նրան ամրագրված տեխնիկայի տեսակն ըստ հաստիքի	ԶՀՄ N⁰-ը	Զ/մ-ի անձնակազմի ցուցակներում գրանցելու ամսաթիվը և հրամանի N⁰-ը	Զ/մ-ի անձնակազմի ցուցակներից հանելու ամսաթիվը և հրամանի N⁰-ը

10. Զորամասի հրամանատարության եզրակացությունը պատերազմի ժամանակ օգտագործելու վերաբերյալ (ինչ ԶՀՄ-ով, պաշտոնով, հատուկ ծառայության տեսակով, սպառազինությամբ ու տեխնիկայով և դրանց կոդը)
_____
_____
_____

ԱԳ № 000001

11. Ծառայությունը պատերազմի ժամանակ
(գրանցումները վավերացվում են ստորագրությամբ և զորամասի կնիքով)

Զ/մ-ի համարը, զ/ծ-ի պաշտոնը, նրան ամրագրված տեխնիկայի տեսակն ըստ հաստիքի	ԶՀՄ N⁰-ը	Զ/մ-ի անձնակազմի ցուցակներում գրանցելու ամսաթիվը և հրամանի N⁰-ը	Զ/մ-ի անձնակազմի ցուցակներից հանելու ամսաթիվը և հրամանի N⁰-ը

12. Մասնակցությունը մարտերին, մարտական գործողություններին ինքնապաշտպանության ուժերի կազմում (որտեղ է մասնակցել, երբ, որ զորամասի կազմում, ինչ պաշտոնով) _____
_____
_____

6

13. Զինվորական երդում է տվել _____ զորամասում ____ _____ 20 թ.

_____ ԶՈՐԱՄԱՍԻ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Կ.Տ._____
(կոչում, ստորագրություն)

---

14. Զինվորական կոչումների և մասնագիտական կարգի շնորհումը:

Շնորհված է զինվորական կոչում, որակական կարգ	Ում հրամանով է շնորհված, հրամանի ամսաթիվը և N⁰-ը	Ստորագրությունը և կնիքը

7

ԱԳ № 000001

15. Պետական պարգևներ և պարգևատրումներ կրծքանշաններով ու արժեքավոր նվերներով

_____

_____

_____

_____

_____

_____

16. Զինվորական ծառայության ընթացքում հիվանդություններ, վնասվածքներ և խեղումներ ստանալը (նկարագրությունը, ստանալու օրը, ամիսը, տարեթիվը) _____

_____

_____

_____

_____

_____

8

III. ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ
(գրանցումները վավերացվում են ստորագրությամբ և զորամասի կնիքով)

Սպառազինության և տեխնիկական գույքի անվանումը	Ժամանակը			
	տրման		վերադարձման	
	քանակը	ամսաթիվը	քանակը	ամսաթիվը

9

ԱԳ № 000001

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ

17. Հաշվառման կարգը	18. Հաշվառման խումբը	19. Կազմը

20. ԶՀՄ N⁰-ը և պաշտոնի ու ԶՀՄ անվանումը (պաշտոնի որակավորումը)	21. ԶՀՄ, պաշտոնի և հատուկ ծառայության տեսակների կոդը

22. Մասնակցությունն ուսումնական հավաքների

Թվականը	Քանի օրով	Որ զորամասում, կազմակերպությունում	Պաշտոնը և տեխնիկայի տեսակը	ԶՀՄ N⁰-ը

ԱԳ № 000001

V. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23. ____ _____ 20 թ.
_____ հանձնաժողովը ճանաչել է _____
_____ ըստ ՀՀ կառավարության ____ _____ 20 թվականի № _____ որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի _____-րդ հոդվածի _____ կետի:
Ենթակա է վերափորձաքննության
____ _____ 20 թ.
Գրքույկի տիրոջ ստորագրությունը _____

_____ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ._____
(կոչումը, ստորագրությունը)

12

24. ____ _____ 20 թ.
_____ հանձնաժողովը ճանաչել է _____
_____ ըստ
ՀՀ կառավարության <____> _____ 20 թվականի № _____ որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի
_____-րդ հոդվածի _____ կետի:
Ենթակա է վերափորձաքննության
____ _____ 20 թ.
Գրքույկի տիրոջ ստորագրությունը _____

_____ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ._____
(կոչումը, ստորագրությունը)

13

ԱԳ № 000001

25. ____ _____ 20 թ.
_____ հանձնաժողովը ճանաչել է _____
_____ ըստ
ՀՀ կառավարության ____ _____ 20 թվականի № _____ որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի
_____-րդ հոդվածի _____ կետի:
Ենթակա է վերափորձաքննության
____ _____ 20 թ.
Գրքույկի տիրոջ ստորագրությունը _____

_____ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ.Տ._____
(կոչումը, ստորագրությունը)

14

VI. ՆՇՈՒՄՆԵՐ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԿԱՐԳԱԳՐԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զորահավաքային կարգագիրը տրվել է	Զորահավաքային կարգագիրը վերցվել է

15

ԱԳ № 000001

26. Մարդաչափական տվյալներ

Հասակը	Գլխի շրջագիծը	Հակագազի չափսը	Համազգեստի չափսը	Կոշիկի չափսը

VII. ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄՆԵՐ

_____

_____

_____

_____

_____

_____

16

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

17

ԱԳ № 000001

VIII.ՆՇՈՒՄՆԵՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

27. Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.
Զորահավաքային բաժանմունքի պետ
_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

---

28. Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.
Զորահավաքային բաժանմունքի պետ
_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

18

29. Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.

Զորահավաքային բաժանմունքի պետ
_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

---

30. Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.

Զորահավաքային բաժանմունքի պետ
_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

19

ԱԳ № 000001

31.Հաշվառվել է _____
զինվորական կոմիսարիատում
_____ _____ 20 թ.
Զորահավաքային բաժանմունքի պետ
_____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)
_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

---

32. Հանվել է զինվորական հաշվառումից

_____ _____ 20 թ.
_____
_____ կապակցությամբ:

_____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ

Կ. Տ. _____
(կոչումը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

ԿԱՆՈՆՆԵՐ

Զինվորական հաշվառման և զինվորական գրքույկի վերաբերյալ

1. Զինծառայողները, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիները պարտավոր են խնամքով պահել զինվորական գրքույկը, այն կորցնելու դեպքում զինծառայողները անհապաղ այդ մասին զեկուցում են անմիջական պետին, իսկ պահեստազորում հաշվառված քաղաքացիները՝ զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Այդ դեպքում զինվորական գրքույկը համարվում է անվավեր և տրվում է նոր զինվորական գրքույկ:

Զինծառայողները զինվորական գրքույկը կորցնելու դեպքում ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

2. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան զինապարտները պարտավոր են խստորեն պահպանել զինվորական հաշվառման հետևյալ կանոնները.

1) զինվորական հաշվառման համար ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ.

2) զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով արձակվելու դեպքում յոթ աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման կանգնելու համար.

3) հաշվառման վայրը փոխելու դեպքում զինվորական հաշվառման կանգնելու համար ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ հաշվառման նոր վայր ժամանելուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում.

22

4) զինվորական կոմիսարիատի ծանուցման դեպքում ճիշտ ժամանակին ներկայանալ սահմանված վայրը՝ ունենալով զինվորական հաշվառման գրքույկը և անձնագիրը:

3. Զինապարտները զինվորական հաշ-վառման կանոնների խախտման համար ենթակա են պատասխանատվության՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Կանոններին ծանոթացել եմ՝

_____
(զինվորական գրքույկի տիրոջ ստորագրությունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 4

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Զինհաշվառման վայրի զինվորական կոմիսարիատը	Նշումներ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

Ձև N 5

Ց ՈՒ Ց Ա Կ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ 20 թ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ

_____

(համայնքի կամ ուսումնական հաստատության անվանումը)

NN ը/կ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Զինվորական կոմիսարիատում զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ամփոփացուցակում հերթական համարը	Նշումներ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

Ներկայացվում է _____ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Համայնքի կամ ուսումնական հաստատության ղեկավար՝ _____

(ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ _____ 20 թ.

1. 7-րդ և 8-րդ սյունակները լրացվում են զինվորական կոմիսարիատում:

Ձև N 6

Ց ՈՒ Ց Ա Կ

ԱՇԽԱՏՈՂ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ
ՊԱՐՏԱԴԻՐ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԱՆՑԱԾ ԱՆՁԱՆՑ

_____

(պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կազմակերպության կամ ուսումնական հաստատության անվանումը)

NN ը/կ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Բնակության վայրի հաշվառման հասցեն	Աշխատանքի վայրը և պաշտոնը	Նշումներ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

Ներկայացվում է _____ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Պետական մարմնի կամ համայնքի կամ
կազմակերպության կամ ուսումնական հաստատության ղեկավար՝ _____

(ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

_____ _____ 20 թ.

Ձև N 7

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Ազգանունը	Անունը	Հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարե-թիվը	Օտարերկրյա պետությունում բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարը	ՀՀ-ում նախկին բնակության վայրի հասցեն	Առընչությունը զինվորական ծառայությանը	Զորակոչից տրված տարկետման ժամկետը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*